Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի պետական համալսարանի

կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2016 թ. փետրվարի 19-ին կայացած թիվ 7 նիստի

Օրակարգում՝

- Ֆակուլտետի կառուցվածքային փոփոխությունների հարցը
- Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը
- Թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը
- Ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման երաշխավորման հարցը
- Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 34-ը:

- **Ֆակուլտետի կառուցվածքային փոփոխությունների հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան է.Ս.Գևորգյանի հաղորդումը կենսաբանության ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին: Նա նշեց, որ եկել է ժամանակը կատարելու փոփոխություններ ֆակուլտետի կառուցվածքում, քանի որ առկա է անհամապատասխանություն բաժանմունքների և ամբիոնների քանակությունների միջև: Կենսաբանության բաժանմունքում կան 8 ամբիոններ, մինչդեռ կենսաֆիզիկայի և կենսաքիմիայի բաժանմունքները ներկայացված են համապասխանաբար մեկական ամբիոններով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ գնալով պակասում է բնագիտական ֆակուլտետների դիմորդների քանակը: Հատկապես 2017-2018 ուս. տարում կտրուկ նվազելու է ՀՀ շրջանավարտների, ուստի նաև՝ դիմորդների քանակը: Ուստի, հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները՝ անհրաժեշտ է վերանայել թե՝ բակալավրիատի, թե՝ մագիսրատուրայի բոլոր ուսումնական պլանները և ծրագրերը:

Դեկանը հիշեցրեց, որ արդեն 2 տարի է, ինչ դադարեցվել է “Կենսաինֆորմատիկա” մասնագիտությամբ ընդունելությունը, և 2016-2017 ուս. տարում ընդունելությունը կազմակերպվելու է “Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա” մասնագիտությամբ: Պ-րն Գևորգյանը նշեց, որ իր և մեթոդական խորհրդի ջանքերով արդեն գրեթե պատրաստ է “Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա” մասնագիտության նոր ուսումնական պլանը: Այդ պլանում կատարվել են փոփոխություններ՝ ուղղված անհրաժեշտ նոր մոդուլների ներմուծմանը:

Հաջորդ փոփոխությունը վերաբերվում էր Կենսաքիմիայի բաժանմունքին: Դեկան է.Ս,Գևորգյանը տեղեկացրեց գիտական խորհրդի անդամներին, որ այս հարցը բազմիցս անգամ քննարկվել է ամբիոնների վարիչների հետ, դեկանատի նիստերում: Նա նշեց, որ կենսաքիմիայի հանդեպ դիմորդները ցուցաբերում են մեծ հետաքրքրություն: Ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա ուղղությունները բավական մոտ են կենսաքիմիային՝ առաջարկություն եղավ Մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնը միացնել Կենսաքիմիայի ամբիոնին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդի առջև՝ Մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնը Կենսաքիմիայի ամբիոնին միացնելու համար:

2. ամբիոնի անունը վերանվանել «Կնեսաքիմիայի, կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության» ամբիոնի:

Որոշումն ընդունվեց միաձայն:

- **Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի ասիստենտ՝ կ.գ.թ. Ինեսա Մակեդոնի էլոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը : Նա ներկայացրեց ներկայացվում է մրցութային հանձնաժողովի եզրակացությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II 5Բ կետը՝ երաշխավորել Ի.Մ.Էլոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

- **Թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Գայանե Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Գայանե Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ « ԴՆԹ-ի հետ երկու մուլտիմոդալ լիգանդների համատեղ փոխազդեցությունը», Գ.00.02 «Կենսաֆիզիկա» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանին :

ԼՍԵՑԻՆ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Վիկտորյա Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Վիկտորյա Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ « ԴՆԹ-լիգանդ կոմպլեքսների ապակայունացման մոդելավորումը արտաքին ուժի ազդեցության ներքո», Գ.00.02 «Կենսաֆիզիկա» մասնագիտությամբ,

2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանին :

ԼՍԵՑԻՆ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Անի Պոողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ « Դիատոմային ջրիմուռների տեսակային բազմազանությունը Սևանի ավազանի նախկին Գիլի լճի հատակային նստվածքներում», Գ.00.11 «էկոլոգիա» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/,

2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, դոցենտ Լ.Ռ.Համբարյանին:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Արա Պետիկի Անտոնյանի դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի հաստատման հարցը:

Դոցենտ Արա Անտոնյանը հանդես եկավ զեկույցով և ներկայացրեց իր կատարած աշխատանքը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը, մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով գիտական խորհրդի և ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Արա Անտոնյանի դոկտորական ատենախոսության թեման՝ « Որոշ լիգանդ-ինտերկալյատորների՝ ԴՆԹ-ի հետ միացման առանձնահատկությունները», Գ.00.02 «Կենսաֆիզիկա» մասնագիտությամբ,

2. գիտական խորհրդատու հաստատել կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանին :

- **Ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման երաշխավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ գենետիայի և բջջաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Գ.Գ.Հովհաննիսյանի ներկայացված «Գենաթունաբանության հիմունքները» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱԿ՝ գենետիայի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆեսոր՝ Ռ.Մ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել ««Գենաթունաբանության հիմունքները» ուսումնական ձեռնարկը հրատարակման:

- **Ընթացիկ հարցեր**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան է.Ս.Գևորգյանի հաղորդումը ԵՊՀ հիմնադրման 100 ամյակի միջոցոռումների շրջանակում կենսաբանության ֆակուլտետում հայ անվանի կենսաբան-գիտնականների կիսանդրիների տեղադրման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդի առջև կենսաբանության ֆակուլետում հետևյալ հայ անվանի գիտնականների կիսանդրիների տեղադրման համար.

1. Լևոն Օրբելի
2. Նորայր Սիսակյան
3. Միքայել Չայլախյան
4. Արմեն Թախտաջյան

5. Էզրաս Հասրաթյան
6. Հրաչյա Բունիաթյան
7. Գագիկ Դավթյան
8. Հրանտ Բաիկյան

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան